դաքում կալուածներ. վերջապէս նա եղել է ազնուական, հարուստ և խելացի հայ անձն Սպահանի մէջ։

Ցեսնելով խռովութիւն և իրարանցումն շահի պալատում, բարւոք է համարում հեռանալ այն տեղից։ Մի օր յայտնում է շահ Թահմազին, թէ ես ուխտաւոր եմ, պէտք է գնամ Երուսաղէմ յուխտ և յերկրպագութիւն նուիրական տեղեաց. ուստի խնդրում եմ բարեհաճել թոյլ տալ ինձ հանդերձ ընտանեօք գնալ Երուսաղէմ և Ձեր առողջութեան և բախտաւորութեան մասին եւս աղօթել այն տեղ։ Շահը ողորմածաբար թոյլատրում է նրան և ճանապարհում մեծ պատուով և ընծաներով։

Յովհաննէս աղան հանդերձ ընտանեօք գնում է Երուսաղէմ, և այնտեղից վերադառնալով՝ այլ եւս չի գնում պարսից երկիրը Սպահան, այլ ուղղակի անցնում գնում է Վրաստան Թիֆլիս (Տփխիս)՝ քրիստոնեաների մէջ բնակուելու նպատակով։ Մի առ ժամանակ մնալով այն տեղ՝ տեսնում է, որ Վրաստանն էլ խառնաշփոթ դրութեան մէջ է։ Ստիպուած հանգամանքից նորա երկու որդիներից մինը բաժանվում գնում է Ռուսաստան, որի սերունդը այժմ եւս գտնվում է Ս. Պետերբուրգում. նրանցից եղել են և կան այժմ տէրութեան ծառայութեան մէջ նշանաւոր անձինք — աստիճանաւորք, իսկ միւս որդին՝ Պօղոս անուամբ՝ գալիս է Զիրվանու Զամախի քաղաքը, ուր և հաստատում է բնակութիւն։

Յիշեալ Պօղոս աղան հայերէն բաւական ուսումն առած, կարդացած է լինում. նա ունենում է մի որդի Մարկոս անուամբ, որին լաւ կրթում է հայերէն լեզուի մէջ։ Այդ ժամանակ երկիրը լինում է վրդովուած. հայերը հալածուած պարսիկների ձեռքից՝ միշտ սարսափի մէջ և չունէին ապահովութիւն կեանքի, գոյքի և ընտանեաց։

Պօղոս աղան երկրի խանից յարգուած և սիրելի անձն լինելով՝ միշտ կարողացել է խանի ներողամտութիւնը հայցել, քաղցր և հաշտ աչքով նայել տալ տեղական հայերի վերայ, և իւր բարեխօսութեամբ պաշտպանել տալ հայերին պարսիկների հալածանքից և բռնութիւններից։

1734 — 35 թ. Զամախի քաղաքի մօտ Քարքանջ անուան